

ՔԷՐԷՔ

Մովաքի լեռներուն մօտակայ,
Կը կանգնիս բլրորի մը վըրայ
Հողաշէն եւ համեստ տուներով:

Մի քանի փողոցներ ամայի,
Անաղմուկ, կարծես թէ կը ննջեն
Թեւերուն վըրայ մեղմ՝ գեփիւռի...

Սակայն երբ ժամը գայ աղօթքի,
Հասարակ օրերուն՝ Կիրակի,
Ամէն ոք կը դիմէ Աստուծոյ...

Ծոցիդ մէջ բերդ մը կայ անառիկ,
Լռելեայն կը պատմէ անցեալի
Փառքը մեծ՝ մահիկի եւ խաչի...

Ու ծառի մը հսկայ՝ շուքին տակ,
Կայ մատուռ մ'անցեալէն՝ փլատակ,
Կառուցուած քաջ հայու ձեռքերով...

Հովիտիդ մէջ «սելի», առատ ջուր,
Պարտէզներ պտղատու ծառերով,
Կ'ուռճանան հայերու խնամքով...:

ԶԱԻԷՆ ԵԿԷՆԵԱՆ